ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1965 Общественные науки

Հ. Գ. Վարդանյան

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

Հայերի բնաջնջման քաղաքականությամբ թուրքական կառավարող շրջանները նպատակ ունեին «լուծել» հայկական հարցը։ Այդ են ասում փաստերը, այդ մասին են մասնավորապես վկայում թուրքական ու օտար աղբյուրները։

Հայկական եղեռնի պատասխանատվությունն ամբողջապես ընկնում է թուրքական բուրժուա-կալվածատիրական դասակարգերի ու նրանց իշխանությունների վրա, որոնք հատուկ ծրագրով կազմակերպեցին հայերի բնաջնջումը։

Անցյալ դարի 90-ական թվականներին ստեղծվեց երիտասարդ թուրքերի իթթիհատական («Միություն և առաջադիմություն») կազմակերպությունը, որը շուտով աչքի ընկավ իր համաիսլամական ռեակցիոն գաղափարախոսությամբ։ «Թուրքիան թուրքերի համար» — այս էր նրա պրոպագանդայի անկյունաքարը։

1908 թ. զինվորական հեղաշրջման ճանապարհով իշխանությունը նվաճելով և իրենց դիրքերն ամրապնդելով, երիտասարդ թուրքերը, բոլորովին դեն նետեցին դիմակը և կայսրության հպատակ հայերի, հույների և այլ ազգային փոքրամասնությունների հետ ավելի դաժան վարվեցին, քան արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը։ 1908 թ. հուլիսի 23-ին վերջինս հայտարարեց օսմանյան սահմանադրության վերականգնումը։ Հենց այդ ժամանակ Սալոնիկի ազատության պողոտայում Էնվեր փաշան իր արտասանած ճառում ասաց. «Այսօր, բռնապետական կառավարությունը անհետացած է։ Մենք ամենքս եղբայրներ ենք։ Թուրքիայի մեջ ասկե ետքը ոչ պուլկար կա, ոչ հույն, ոչ սերպ, ոչ ռումին, ոչ իսլամ, ոչ հրեա։ Նույն կապույտ երկնքի տակ մենք ամենքս հպարտ ենք օսմանցի ըլլալնուս»[1]։

Օսմանյան սահմանադրությունը և բոլոր ազգերի հավասարության մասին երիտասարդ թուրքերի արած հավաստումները ոգևորեցին հպատակ քրիստոնյա ժողովուրդներին։ Վերջիններիս թվաց, թե սահմանադրության վերականգնման մասին եղած հայտարարությամբ նոր դարագլուխ է բացվում իրենց համար։ Իրականում, սակայն, ամեն ինչ կատարվում էր նախորդների եռանակով։ «Կառավարական սահմանադրական ձևը շարիաթին հակառակ չէ»[2] հայտարարությամբ արդեն երիտթուրքերը դեն էին նետում առաջադիմության մասին իրենց խոստումները։

Միջազգային իրավունքի խոշոր մասնագետ, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, եթկար ժամանակ Կ. Պոլսի ռուսական դեսպանատան թարգման Անդրե Մանդելշտամը իրավացի կերպով նշում է, որ իշխանությունը նվաճելով, երիտասարդ թուրքերը ժողովուրդներին բերին մի քանի Աբդուլ Համիդ-

---

1 Հ ե ն ր ի Մ ո ր գ ե ն թ ա ո ւ, Մր. Մորգենթաուի հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919, էջ 15։

2 Ա. Դ ո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թթ., Երևան, 1917, էջ 41։

ներ։ «Սուլթանեն նվազ խորամանկ, նվազ քաղաքագետ,— գրում էր Ժակ դը Մորդանը, — այս ինքնակալ հեղափոխականները կորոշեն շարունակել Աբդուլ Համիդի արյունոտ գործը, այն է՝ ոչնչացնել կայսրության ոչ-մահմեդականները։ Եվ եթե բարենորոգություն մը կուզեն, այդ ալ իրենց գործերուն եվրոպական միջամտությունն ջնջելու բարենորոգություններ էր, դադարեցնելով եվրոպական մենաշնորհները»[4]։

Երիտասարդ թուրքերը, նշում է նույն հեղինակը, իրենց համաիսլամական ձգտումներով, ամբողջ աշխարհի մահմեդականներին Օսմանյան կայսրությանը ենթարկելու դիտավորություններով կամենում էին նորոգել Մուհամեդի սիստեմը՝ ի նպաստ իշխանության, վայելքի և հարստության ծարավի մարդկանց։ Իսկ դա «կայսերապաշտության ամենաանարգ ձևն էր»[5]։

Բարենորոգումներ մտցնելու, հայերին և մյուսներին քաղաքական ինքնավարություն տալու փոխարեն, երիտասարդ թուրքերը անցան նրանց բնաջնջմանը։ Դրա առաջին ազդանշանը եղավ 1909 թ. Ադանայի եղեռնը։ «Ավազ,— գրում է Ժակ դը Մորդանը,— հայերու անձնավորության հավաստիքներուն երիտասարդ թուրքերը, նույնիսկ Ապտուլ Համիտի գահընկեց ըլլալե առաջ կը պատասխանեն Ատանայի կոտորածով, որով կըսկսի ամենաահարկու ոճիրներու շարքը, որ պատմությունը երբեք արձանագրած ըլլա»[6]։

Կառավարական հանձնաժողովի անդամ, պառլամենտի դեպուտատ Հակոբ Պապիկյանն իր տեղեկագրում ցույց տվեց, որ եղեռնի հանցագործները կառավարական զորքերն էին ու թուրքական իշխանությունները, որոնք սրախողող էին արել 30.000 հայ և երեք միլիոն թուրքական ոսկու արժողությամբ նյութական վնաս հասցրել նրանց ընտանիքներին[7]։

Պապիկյանի տեղեկագրում նշված է, որ Ճեվետ բեյը հանձնաժողովին համոզել էր, թե «հայերը բազմաթիվ զենքեր գնած են և թե մեկ քանի ամսվա միջոցին Ատանա ներմուծած են 12.000 հրացան[8]։ Իսկ Ասաֆ բեյը 1909 թ. ապրիլի 3-ին հեռագրել էր ներքին գործոց նախարարությանը, թե «Հասան-պեյլիի և Զեյթունի ֆիտայիները հավաքված են Սանճաքը քար ու քանդ ընելու համար և շատ հավանաբար պիտի գան մինչև Ատանա»[9]։

Նախարարի ու կուսակալի հրամաններով, զինվորներին օգնելու նպատակով, 400 քրեական հանցագործներ ազատվել էին կալանքից ու մղվել հայերի դեմ։ Դահիճները ողջ-ողջ այրել էին մարդկանց, վիրավորներին ու հիվանդներին։ «Ադանայի ոճիրների սրտաճմլիկ մանրամասնությունները մեկ կողմից, զինվորական ատյանի և քննիչ հանձնաժողովի անարդար վերաբերմունքը դեպի ոճրագործ մահմեդականներն ու անմեղ հայերը՝ մյուս կողմից հայ պատգամավոր Պապիկյանի վրա այնպիսի զարհուրելի տպավորություն գործեցին, որ նա Պոլիս վերադառնալով, անասելի հոգեկան տանջանքներ կրեց և գերեզման իջավ, թողնելով մի տեղեկագիր, որ ահագին լույս էր սփռում Ադանայի ոճիրների վրա»[10]։

---

3 Ա. Մանգեշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը, Կ. Պոլիս, 1919, էջ 8։

4 Ժակ դը Մորդան, Հայ ժողովրդի պատմություն, Պոսթոն, 1947, էջ 242—243։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, էջ 342։

7 Տե՛ս Հակոբ Սարգսյան, Ատանայի եղեռնը, Կ. Պոլիս, 1919, էջ 21։

8 Նույն տեղում, էջ 31։

9 Նույն տեղում, էջ 34։

10 Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թթ., էջ 43։

Հայերի դրությունը գնալով ավելի էր ծանրանում։ Գավառներում կրկին ծայր առան բռնություններն ու հալածանքները։

Հայերի բնաջնջման ծրագիրը երիտասարդ թուրքերը մշակել էին վաղուց, և այն իրագործման մեջ դրին պատերազմի առաջին իսկ օրից։

1915 թ. գարնանը տեղի ունեցած թուրքական կառավարող շրջանների խիստ գաղտնի խորհրդակցության բուն նպատակը հայերի բնաջնջումն էր։ Խորհրդակցությունում Գարա Քեմալը նկատի ունենալով հայերին և հայկական հողերը, հայտարարեց. «Թող կորչեն, այս հողերը Իթթիհատ և Թերագդրի իշխանության կը պատկանին, թույլ չպիտի տանք, որ որևէ մեկը ձեռք երկարե անոր»[11]։

Դոկտոր Նազիմը պահանջում էր արագորեն Թուրքիան մաքրազարդել հայերից։ «Եթե այս մաքրագործումը ընդհանուր և վերջնական չպիտի ըլլա, — ասում է նա, — օգուտի տեղ վնասը անպայման է. պետք է, որ հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի. հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլա նույնիսկ, խնդիրը կատարված իրողություն մը կը դառնա և կը փակվի. այս անգամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերու մեկ անհատն իսկ չի մնալու պայմանով բնաջնջումը հարկ է...»[12]։

Զգալով, որ այդ վայրագությունները կարող են շարժել հայերի հետ դարերի ընթացքում համերաշխ ապրող, թուրք աշխատավորների խիղճը, դոկտոր Նազիմը նախազգուշացնում է, որ խղճահարները կպատժվեն։ Պատերազմի դաշտում, ասում է նա, մեռնում են միլիոնները։ «Ես թուրքին, միայն թուրքին ապրելը, այս հողին վրա անկախ իշխող մ'ըլլալը կը փափաքիմ. ոչ թուրք տարրերը թող ջնջվին, որ ազգության և կրոնքին այլ պատկանող ըլլան. այս երկիրը ոչ-թուրք տարրերեն մաքրելը պետք է. կրոնքը իմ քով ոչ մի արժեք չունի. իմ կրոնքս Թուրանն է»[13]։

Նազիմի ելույթն է՛լ ավելի բորբոքեց մոլեռանդ շովինիստների կրքերը։ Արձագանքելով նրան, խոջա Հասան Ֆեհմին բիոլոգիական տեսակետից «հիմնավորեց» հայերի բնաջնջումը, իսկ մի այլ դոկտոր՝ Բեհաէտտին Շաքիրը իր ելույթում ուղղակի ասաց. «Անհարազատ և վնասակար խոտերը արմատախիլ ընելով մեր հողը մաքրելու ստիպված ենք. մեր հեղափոխության նպատակը, ծրագիրը այս է»[14]։

Ամփոփելով ելույթները և հավանություն տալով բնաջնջումը հետևելու առաջարկություններին, Ջավադ փաշան ավելացրեց. «Հայերու մեկ անհատն իսկ չի մնալու պայմանով բնաջնջումը մեր ազգային քաղաքականության տեսակետին որչափ որ ստիպողական պետք մըն է, նույնչափ ալ թուրքին տընտեսական իշխանությունը հիմնելու համար կարևոր է...»[15]։

Խորհրդակցությունը լսեց Էնվեր փաշայի հաղորդումը Գերմանիայի հետ կնքված ռազմական դաշինքի մասին։ Միաժամանակ նա հասկացրեց, որ «Գեր-

---

11 Մ ե վ լ ա ն Ջ ա դ ե Ր ի ֆ ա թ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, թուրք, թարգմ., Բեյրութ, 1938, էջ 159։

12 Նույն տեղում, էջ 159—160։

13 Նույն տեղում, էջ 161։

14 Նույն տեղում, էջ 162 (ընդգծումը մերն է — Հ. Վ.)։

15 Նույն տեղում, էջ 165—166։

մանիան համաձայն է, որ Եգիպտոսը, Կովկասը վերագրավենք և նույնիսկ Պարսկաստանն էլ գրավենք... Տարակույս չկա, որ մենք պիտի կրնանք Թուրանի ճամբան բանալ և Թուրք միություն ապահովել»[16]։

Էնվերի հաղորդումը նոր շունչ տվեց մարդասպանների ոհմակին։ Հանդես գալով խորհրդակցությունում, նրանցից մեկը՝ Բեհաէտտին Շաքիրն ասաց. «Ընկեր Էնվերին հայտարարությունները կարևոր են, կացությունը լավ կերպով պարզեց. այս բավ է, Թուրքիո հաղթության ճամբան Էնվերին ցույց տվածն է, Գերմանիո հետ քալել նախընտրելի է. այս ճամբան փրկության և Թուրանի ճամբան է»[17]։

Չեմալ փաշան իր հիշողություններում փորձում է ցույց տալ, որ հայերը ավելի մեծ վնասներ են հասցրել Թուրքերին, քան Թուրքերը հայերին։ Նա անամոթաբար արդարացնում է իր կառավարության հայաջինջ ռեակցիոն քաղաքականությունը։

Նայիմ բեյը «Խղճի ձայնը» վերնագրով իր հիշողություններում հնարավորին չափ վեր է հանել ճշմարտացի պատկերը։ Աշխատելով Հալեպի նահանգի հայերի տեղահանությամբ զբաղվող կառավարական հանձնաժողովում՝ որպես քարտուղար, որի մոտ էին կենտրոնանում բոլոր գաղտնի փաստաթղթերը, նա ցույց է տալիս Թուրքիայի միայն մի նահանգում հայկական ջարդերի երեք շրջանը. 1. Բես-ուլ-Այնի ջարդը՝ 70.000 հոգի, 2. Ինթիլիի ջարդը՝ 50.000 հոգի, 3. Ամենից զարհուրելին Տեր-Զորի մեջ եղած ջարդը, որտեղ Զեքի բեյը կոտորել էր մոտ 200.000 հոգի։

Բես-ուլ-Այնի կոտորածի նախապատրաստման և իրագործման մասին Նայիմ բեյը հետևյալն է պատմում. «Հայոց եղերական տարագրության և սպանության խնդիրը, որ Թուրք անունը մարդկության հավիտենական անեծքին արժանի կը դարձնե, անանկ կը կարծեմ, թե համաշխարհային պատմության մինչև այսօր արձանագրված զարհուրելի դեպքերեն ոչ մեկուն կը նմանի։ Թուրքիո ընդարձակ հողամասին որ անկյունն ալ որոնվի, որ ամենամութ խորշը ալ խուզարկվի, ամենաանգութ կերպով խողխողված հազարավոր հայու դիակներ և կմախքներ պիտի գտնվին»։ Եվ ապա «Երբեք չպիտի մոռանամ այն գիշերը, երբ գայմագամին տունը կը գտնվեի։ Փոթորիկ մը դուրսը ավերներ կը գործեր։ Տասը վայրկյան անդին՝ այդ փոթորիկին զարհուրանքին տակ մնացած թշվառներուն ողբերն ու հեծեծանքները կը լսեին... Անոնք՝ Սվազի, Տիարպեքիրի, Խարբերդի հայ գաղթականներու մնացորդներ էին։ Հինգ-վեց նահանգներու մոտավորապես մեկ միլիոն բնակչություն տեղահան կըլլան... Հալեպ եկա. հասած գաղտնի ծածկագիրները քանի կարձանագրեի, դող կուտար վրաս։ Մեծ ազգ մը, իր կիներով և ձագուկներով, մահվան դատապարտված էր»[18].

Հալեպի իշխանությունները սրբությամբ կատարում էին Թալիաթի գաղտնի հրամանը։ Դրանցից մեկի մեջ ասված էր. «Հայերու համար Թուրքիո հողին մեջ ապրելու, աշխատելու իրավունքները ամբողջովին ջնջված են և այս մասին կառավարությունը, բովանդակ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայած է նույնիսկ օրորոցի մանուկը շթողուլ»[19]։

---

16 Նույն տեղում, էջ 31։

17 Նույն տեղում, էջ 31—32։

18 Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը, Բոստոն, 1921, էջ 20—22։

19 Նույն տեղում, էջ 35 (ընդգծումը մերն է — Հ. Վ.)։

Հալեպի կուսակալ Ապտուլահատ Նուրի բեյի հետ խոսելիս, Նայիմ բեյը ասում է. «Պեյ էֆենտի, դաղթականներու առաքումը քիչ մը մեղմացնենք, որովհետև մահը բովանդակ Միջագետքին կը սպառնա. այս ընթացքում՝ այդ ընդարձակ հողամասին վրա դեռեն զատ ոչ ոք չպիտի մնա։ Նուրի պեյ խնդաց. «Տղաս, ըսավ, այս կերպով երկու վնասակար տարրերը մեկանց կը փչացնենք. հայերուն հետ սատկողները արաբները չե՞ն, գե՞շ է. Թրքության ապագային ճամբան կը հարթվի»։ Լռեցի. այս ահավոր պատասխանը դողացուց զիս»[20]։

Նայիմ բեյի հիշողություններում կան մի քանի ծածկագրեր, որոնցով Թալիաթը տեղական իշխանություններից պահանջում էր պաշտոնից վտարել և պատասխանատվության ենթարկել այն պաշտոնյաներին, ովքեր բնաջնջման ընթացքում հայերի նկատմամբ խղճի զգացում կցուցաբերեին։

Թուրքական դահիճները, իշխանությանը իրենց նվիրվածությունը ցուցաբերելու նպատակով, անասելի վայրագություններ էին գործադրում հայերի նկատմամբ։ «Մեսքենեի և Ապուհաթթարի միջև գտնված Տերսի կոչված կայքը, — գրել է Նայիմ բեյը, — ամենեն կարևոր եղեռներեն մեկն էր։ Մահվան գատապարտվածները հոն կը սպանվեին և գետ կը նետվեին։ Մեսքենեի մեկ ծայրեն մյուսը կմախքներով լեցված էր. պարզապես ոսկորներու արտի մը երևույթ ստացավ... Միմիայն Հալեպեն՝ Բես-ուլ-Այնի և Մեսքենեի ճամբով՝ 200.000 հայ ղրկվեցավ. և այդ խոշոր քանակության հազիվ 5000—6000 հոգին կրցած են ողջ մնալ։ Կինները, զանազան ճամբաներու վրա, ժանդարմներու և ժողովրդեն խժդժությամբ ու վայրենությամբ՝ սվինով կամ հրազենով սպանվեցան»[21]։

Նույն հեղինակը նշում է, որ գավառներում տեղի ունեցած խմբական ջարդերի ժամանակ «ամենեն զարհուրելի չարչարանքներով սպանվողներն եղան կրոնավորները, առաջնորդ, վարդապետ, քահանա և այլն։ Ընդհանրապես կտոր-կտոր ըրին զանոնք, օրերով բանտերու մեջ տանջելե ետքը»[22]։

Նայիմ բեյը նշում է, որ պատմությանը մինչ այդ անհայտ ոճրագործություններ են տեղի ունեցել հայերի հանդեպ բոլոր նահանգներում, գավառներում ու քաղաքներում։ «Երզնկայի երեսփոխան Հալեթ պեյ, — գրում է նա, — սոնոցմե հարյուրավորներ գետը թափեց։ Խարբերդի մեջ նույն բանը եղավ։ Ավելի սովորաբար կը վառեին զանոնք։ Պիթլիսի մեջ՝ կուսակալ Մուստաֆա Ապտուլհալիկ պեյ... պղտիկներեն հազարի չափ հավաքել տալով առաջնորդեն Թաշխուր ըսված վայրը, և զանոնք վառել տալով Թուրք երևելիներու և ստվարաթիվ ամբոխի մը ներկայության, արտասանեց նշանավոր ճառ մը, որու մեջ կրսեր թե «Թուրքի ապագա գոյության համար նայկական գավառներուն մեջ հայ իսպառ բնաջինջ ընել պետք է։ Այդ դժբախտ տղայքը վառելե վերջ լցված էին նախապես բացված հորերու մեջ, որոնցմե՝ օրերով կը լսվեին ողջ մնացածներու հոգևարքի հռնդյունները։ Ատրյամանի մեջ՝ Սեբաստիո կարավաններու տղայքը նույնպես վառվեցին»[23]։

Նայիմ բեյը, վերջապես, իր հիշողություններում հրապարակում է ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանը՝ զինվորական հրամանատարությանը։ Ահա այն։

---

20 Նույն տեղում, էջ 25։

21 Նույն տեղում, էջ 104—105։

22 Նույն տեղում, էջ 103։

23 Նույն տեղում, էջ 177 (ընդգծումը մերն է — Հ. Վ.)։

«Ներկա կացության բերմամբ, կայսերական հրամանով որոշված է հայ ցեղին ամբողջական փչացումը։ Անոնց մասին հետևյալ գործողությունները պիտի ըլլան.

1. Մինչև հինգ տարեկան մանուկներեն զատ՝ օսմանյան հպատակ եղող և երկրին մեջ գտնվող հայ անունը կրող բոլոր պաշտպոզուքները (ոչ զինվորականներ) քաղաքե դուրս հանելով պիտի սպանվին։

2. Կայսերական բանակներու մեջ ծառայող բոլոր հայ անհատները, առանց դեպքի մը տեղիք տալու՝ իրենց զորաբաժիններեն զատելով, ընդհանուրին աչքեն հեռու ծածուկ վայրերու մեջ գնդակահար պիտի ըլլան։

3. Բանակին մեջ գտնվող հայ սպաներն ալ, իրենց պատկանած զորախմբերու բանակատեղիին մեջ պիտի բանտարկվին մինչև իրենց մասին զեկուցում ըլլալը։

Այս երեք կարգադրությունները յուրաքանչյուր բանակի հրամանատարության հաղորդած թվականեն 48 ժամ վերջ անոնց գործադրության մասին հատուկ զեկույց մը պիտի ըլլա։ Ասոր համար անհրաժեշտ նախապատրաստություններեն զատ, ոևէ գործողության պետք չէ ձեռնարկել»[24]։

Այսպիսով, երիտասարդ թուրքերի կառավարությունը գազանաբար հոշոտեց նաև այն երիտասարդներին, որոնք հարկադրաբար թուրքական բանակներում էին ծառայում և կատարում իրենց քաղաքացիական պարտքը։

Ահավոր վայրագություններ կատարեցին թուրքական ու քրդական դահիճները՝ Տիգրանակերտի, Մուշի ու Սասունի հայերի նկատմամբ։ Ժակ դը Մորդանը նշում է, որ բանակ կանչված բոլոր երիտասարդները գնդակահարվեցին, իսկ «քաղաքներն ու գյուղերը, ուր ծերերը, կիները և երիտասարդները միայն մնացած էին, ինքնապաշտպանության անկարող, զոբք մը ղրկեն, կը սպանեն այր մարդիկը և տղաները»։ Գաղթի արժանացածները, նշում է նույն հեղինակը, մեռնում էին քաղցից կամ գնդակահարվում։ «Խումբերը ճամբա կը հանվին, հսկողությամբ զինվորներու և քուրդ հեծելազորներու, որոնք ճանապարհին ամեն գազանություն կը գործեն, — իրենց հաճույքին համաձայն կը սպանեն... Վկա մը կըսե. «օր մը պատահեցանք աշխատավորներու բազմության մը։ Զանոնք բոլորն ալ պիտի մորթեն՝ կըսե մեզի մեր ճանապարհակից ժանդարման»[25]։

Ժակ դը Մորգանը նկատում է, որ առհասարակ ամբողջ հայ ժողովուրդը համատարած կերպով կանգնած էր եղեռնական մահվան դռանը։

1915 թ. հուլիսի 2-ին, գիշերը թուրքերը 1300 հայերից մի խումբ կազմելով՝ Մուշից ուղարկում են Խաս-գյուղը։ Ճանապարհին ամբողջ խումբը ոչընչացվում է։ Հուլիսի 2—3-ը հայերի համար աննկարագրելի ողբերգությունների օրեր եղան։ Մուշ քաղաքի բնակիչ Սինոյանց Տիգրանը թշնամու գազանություններից ազատվելու համար թունավորում է իր 50 ազգականներին՝ ինքն էլ այրվելով իր իսկ հրկիզած հայրենի տանը[26]։

Զարհուրելի ոճիրներ տեղի ունեցան նաև Սասունում, Էրզրումում, Բիթլիսում, Վասպուրականում և այլուր։ Վանի նահանգի Արճեշի գավառում թուրքական և քրդական դահիճները սրախողող արին ամբողջ բնակչությանը՝ չբխնայելով անգամ մանուկներին ու զառամյալ ծերունիներին։ Արճեշի դավա-

24 Նույն տեղում, էջ 232—233։

25 Ժակ դը Մորդան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 344։

26 Նույն տեղում, էջ 345։

ռապետ (գայմագամ) Ալի Դիզաբեկը 1915 թ. ապրիլի 6-ին բոլոր հայ տղամարդկանց բանտարկելու հրաման էր տվել։ Այդ օրը բանտարկվեցին և գիշերը գնդակահարվեցին ավելի քան 700 հոգի։ Այդ կոտորածներից հրաշքով փրկված Մկրտիչ Հովհաննիսյանը (Ավդոյի Մկոն) իր վկայությունների մեջ ցույց է տալիս, թե ինչ զարհուրելի տեսարան էր ներկայացնում Արճեշի եղեռնը։ «Արճեշի մեջ, — նշում է նա, — անուն տղամարդ չը մնաց, բոլորը, բոլորը ընկան գնդակահար ու սրախողխող»[27]։

Մինչև եղեռնը Արճեշի գավառի 51 գյուղերում կար հայկական 1303 տուն՝ 10313 շնչով։ Նրանցից գազանաբար կոտորվեցին 2387 հոգի, առևանգվեցին 518 երիտասարդ կանայք ու աղջիկներ, երեք ամսում տարափոխիկ հիվանդություններից մահացան 953 հոգի։ Տասս գյուղերում ապրող 90 տուն հայեր՝ 693 շնչով, միանգամայն անհետացան։ Այսպիսով, — գրում է Ա-Դո-ն, — Արճեշի գավառը ջարդերի, առևանգումների, մահացությունների և անհետացումների հետևանքով կորցրել էր 4542 մարդ»[28]։

Որոշ գավառներում, քաղաքներում և գյուղերում հայերը փորձեցին դիմադրել, ինքնապաշտպանության դիմել։

Խեղաթյուրելով իրական դեպքերը, օսմանյան կառավարողները ինքնապաշտպանության նպատակով հայերի ձեռնարկած քայլերը որակեցին որպես «ապստամբություն» և փորձեցին դրանով արդարացնել իրենց հայաջինջ քաղաքականությունը։ Այդ կեղծարարության դեմ բողոքի ձայն բարձրացրին նույնիսկ օտարազգի գործիչները։ «Վանա ապստամբություն» ըսվածը,—գրում է գերմանացի դոկտոր Լեփսիուսը, — օրինական ինքնապաշտպանության արարք մը եղավ և ջարդերու պատմության մեկ դրվագը և երբեք դավաճանություն մը... Վանա ինքնապաշտպանությունը և ռուսներու հառաջխաղացումը բնավ, ոչ մեկ բնական պատճառով իրարու հետ կապ չունին»[29]։

Նույնն է հայտարարում նաև լորդ Բրայսը։ «Պատերազմի շղթայազերծումին մեջ հայերը, — ասում էր նա, — չունին ոևէ հանցապարտություն... Սակայն անոնք շատ ավելի տուժած են, քան մեզմե ոևէ մեկը»[30]։

Արդարացնելով երիտասարդ թուրքերի վայրագությունները, մեջտեղ բերելով հայկական «ապստամբությունների» ստահոդ պատճառաբանությունը, Ջեմալ փաշան գրել է. «Եվ որովհետև հայերը անկախ մի պետություն հիմնելու ձգտում ունեն, մի պետություն, ուր նրանք, չնայած քուրդերի և թուրքերի թվական գերազանցության, պետք է վերջիններին վրա իշխեն, ուստի ինքնըստինքյան հասկանալի է, որ սրանք էլ իրենց կողմից ամեն կերպ աշխատում էին ի դերև հանել հայերի այդ ծրագիրը»[31]։

Բայց այդ վերսիան նորություն չէր. այն հորինված էր դեռ 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո, երբ սուլթանական ռեժիմը մեծ վեզիր Քյամիլ փաշայի մշակած ծրագրով նախապատրաստում էր հայերի բնաջնջումը, ստեղծում էր քրդական միություն, Հայաստանին հակադրում էր Քուրդստանը։

---

27 Ա ր ա մ ա յ ի ս, Ջարհուրելի ոճիրը (Մուշ-Սասուն), Բաքու, 1916, էջ 39։

28 Տե՛ս Ա - Դ ո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թթ., էջ 153։

29 Տե՛ս Վ ա հ ա ն Մ ի ր ա գ ե ն ո, Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Կ. Պոլիս, 1920, էջ ժ։

30 Նույն տեղում։

31 Ջ ե մ ա լ փ ա շ ա, Հայկական հարցը, Երևան, 1923, էջ 11։

1914—1915 թթ. հայերի ապրած մեծ ողբերգության մեջ թուրք և քուրդ աշխատավորական զանգվածները ըստ էության հանցանք չունեն։ Նրանցից շատերը որդեգրում էին հայ մանուկներին, ջարդերից փրկելու համար թաքցնում էին հայերին։ 1916 թ. մարտի 2-ին, Թիֆլիսում հրատարակվող «Գաղափար» թերթում տպագրված մի թղթակցություն պատմում է այն մասին, որ Դերջանի շրջանի Մ. գյուղից մի թուրք ծերունի պահել է 2000 հայերի և ապա նրանց հանձնել ռուսական բանակի հետ այդ շրջանը մտած հայկական կամավորական խմբին։ «Աստված սաբաբին պատիժը տա»[32],—ընդ որում ասել է թուրք ծերունին հայ սպային։

Դերսիմի լեռնային քրդերը պահեցին և մահից փրկեցին 20.000 հայ[33], իսկ Սանդ-ժար լեռան քուրդ-եզդիները թաքցրեցին 6000 հայ[34]։ Թուրք և քուրդ աշխատավորների կողմից հայերի նկատմամբ ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքի մասին ուրիշ փաստեր ևս կան։ Հայերին նրանք հովանավորում էին սեփական անձը մեծագույն վտանգի ենթարկելով։ Հետևապես, թուրք և քուրդ բուն աշխատավորական զանգվածները (բացի քրեական ու քաղաքական հանցագործներից ու կրոնական մոլեռանդությամբ արբեցած խավերից) եղեռնի հանցավորներ չեն կարող համարվել։ Ոճրագործներն էին թուրքական իշխանությունները, բուրժուա-կալվածատիրական դասակարգերը, որոնք ձգտում էին Օսմանյան կայսրության համաշխարհային տիրապետության՝ վիլհելմյան Գերմանիայի օգնությամբ։

«Գերման դավը Կովկասում» խորագրով իր աշխատության մեջ Հովհ. Հակոբյանը նշել է, որ Գերմանիան ձգտում էր համաշխարհային տիրապետության, որի իրականացման համար նա ընդառաջ էր գնում համաիսլամական տիրապետության հաստատման երիտասարդ թուրքերի երազանքներին։ «Ան (Գերմանիան) Բյուզանդիոնի թուրքին մոտեցավ և երևութապես համաթուրանական ծրագիրը հրահրեց ու քաջալերեց, անոր ցեղային փառամոլությունը շոյեց. փայփայեց և ապագա ընդարձակածավալ թուրանական կայսրության մը հիմնումին հեռանկարով շփացուց թուրք-թաթարական տարրերը և համաշխարհային կրակին մեջ նետեց զանոնք»[35]։

Այո, նկատում է նույն հեղինակը, գերմանական իմպերիալիստները իրենց էքսպանսիոն քաղաքականության իրականացման համար զոհեցին արևմտահայ ժողովրդին։ «Գերման լրտես-գործակալը, — գրում է նա, — Կ. Պոլիս երիտասարդ թուրքերու ականջին փսփսաց. «Հայաստանի հայությունը խոչընդոտ մըն է Փոքր Ասիո թուրքության ու կովկասյան ցեղերու միացումին։ Դուն քու կայսրությունդ պիտի տարածես Կ. Պոլսեն մինչև Աֆխանիստան, Արաբիայեն մինչև Կովկասյան լեռները, քու ճամբադ մաքրե այս տարրերեն»[36]։

Այսպիսով, վիլհելմյան Գերմանիան ուղղակի ոգեշնչում, քաջալերում էր թուրքական հանցագործներին, գրգռում նրանց բնաջնջելու հայերին։

Գերմանացի Հ. Շթուրմրին, անարգանքի սյունին գամելով գերմանական իշխանություններին՝ թուրքական ջարդարարներին հովանավորելու և հայկական ողբերգությանը մեղսակից դառնալու համար, գրում էր. «Եթե հայ դատին

---

32 Տե՛ս «Դրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդեն», Փարիզ, 1946, էջ 112—113։

33 Ե. Ս. Երանյան, Պատմություն Զարսանջակի հայոց, Պեյրութ, 1956, էջ 66։

34 «Армянский вестник», № 29, 1917, էջ 15։

35 Հովհ. Հակոբյան, Գերման դավը Կովկասին մեջ, Թիֆլիս, 1917, էջ 7։

36 Նույն տեղում, էջ 7—8 (ընդգծումը մերն է — Հ. Վ.)։

և հայ ժողովրդին դեմ ուխտյալ թշնամի մը կա, ան ալ թուրքն հետո Գերմանիան է... Հայկական տարագրության ծրագիրը, իր ծրագրային վիճակին մեջ, գերմանական հղացում մը էր...»[37]։ Նույն հեղինակը նշում էր, որ «Հայ ժողովրդի բաղդատաբար ազատ ապրելը գերմանների համար կը նշանակեր Ասիական Թուրքիո գրավումը Ռուսաստանի կողմե և ուղղակի վտանգ՝ իրենց շինած Պաղտատի երկաթգծին»[38]։ Նա վիլհելմյան Գերմանիայի վարած այդ քաղաքականությունը ամոթ էր համարում Եվրոպայի քաղաքակրթության համար։

Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Ցիմմերմանը 1913 թ. հայտարարել է. «Իրապես, հայերը պետք չեն մեզի, հայերով բնակված Հայաստանը վնասակար է Գերմանիո, որովհետև հայերն են Թուրքիո անզորության աղբյուրը... Մենք գիտենք, թե հայերը որքան հույսեր դրած են ռուսներու վրա. հաշտեցնել հայերը Թուրքերուն հետ՝ անկարելի է. Թուրքիո բաժանման վտանգը ի նկատի առնելով՝ մենք պետք է, որ ձգենք հայերը Թուրքերու հայեցողության»[39]։

1916 թ. սեպտեմբերի 29-ին Գերմանիայի կառավարական խորհրդակցությունում ռազմական մինիստրության կողմից արվեց հետևյալ հայտարարությունը. «Մենք ըրած ենք ինչ որ կրնայինք։ Վերջին միջոցն էր, որ մեր առջև կը մնար, Թուրքիո հետ մեր դաշնակցությունը խզելն էր այդ։ Հայերեն ավելի—որչափ ալ զուտ մարդասիրական տեսակետով անոնց մոտենանք և անոնց վիճակը ողբանք — վեր են մեր որդիները և եղբայրները, որոնք իրենց թանկագին արյունը ծանր պատերազմներու մեջ թափել կը ստիպվին, և որոնք մեզի հետ Թուրքերու օժանդակության պետք ունին»[40]։

Այսպիսով, պատերազմում Թուրքերի օժանդակությունը ստանալու համար, գերմանական իմպերիալիստները նրանց հոշոտմանը հանձնեցին հայերին։ Իրավացի էր Հ. Շթուրմրին ասելով, որ գերմանական ռազմական շտաբներում մշակվեց և երիտասարդ Թուրքերին առաջարկվեց հայերի բնաջնջման ծրագրերը՝ դեռ պատերազմից առաջ[41]։

Իրավացի էր և Անդրե Մանդելշտամը, որը գրում էր, թե Աբդուլ Համիդը գերմանացիների առջև բացեց Թուրքիայի միջնաբերդի արտաքին դռները, իսկ երիտասարդ Թուրքերը բաց արին նրա ներքին դռները։ «Եվ եթե գալիք ժամանակներու մեջ գտնվի իսլամի խղճահար պատմագիր մը, որ ուզե իր վճիռը արտասանել, ֆեթվա մը պիտի տա, նույն հավիտենական ամոթին հանձնելով թե ծերունի սուլթանը և թե երիտասարդ Թուրքերը»[42]։

Վիլհելմյան Գերմանիայի օգնությամբ բնաջնջելով և տեղահան անելով արևմտահայերին և օգտվելով կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հայրենիք վերադառնալուց, ինչպես նաև կովկասյան կոնտրռևոլյուցիոն սեյմի աջակցությունից, երիտասարդ Թուրքերի զինված հորդաները 1918 թ. մայիսին հարձակումներ սկսեցին Արևելյան Հայաստանի վրա՝ Երևանը գրավելու և հայերին իսպառ բնաջնջելու դիտավորությամբ։ Սակայն, նրանց հույսերը կործան-

---

37 Տե՛ս Տր. Տեր-Բարսեղյան, Հայկական ողբերգությունը փաստերու լույսին տակ, էջ 18 (ընդգծումը մերն է — Հ. Վ.)։

38 Նույն տեղում, էջ 20։

39 Նույն տեղում, էջ 21—22։

40 Նույն տեղում, էջ 23—24։

41 Նույն տեղում, էջ 21—22։

42 Նույն տեղում, էջ 23—24։

վեցին։ Սարդարաբադի ճակատամարտում հայերը գոյամարտ մղեցին Թուրքական ջարդարարների դեմ, լուրջ հարված հասցրին նրանց և պաշտպանեցին ապրելու իրենց իրավունքը և ազգային արժանապատվություններ։

Դարերի ահեղ հողմերում ծեծված հայ ժողովուրդը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ կարողացավ ազատվել ֆիզիկական բնաջնջումից և կանգնել իր ազգային վերածննդի միակ ճիշտ ուղու վրա։

А. Г. Вартанян

ИЗ ИСТОРИИ МАССОВОГО ГЕНОЦИДА АРМЯН

Резюме

После Берлинского конгресса 1878 года усилились гонения на армян в Османской империи. Правительство султана Абдул Гамида выработало цельную программу геноцида армян. Эта гнусная программа была реализована в 1894—1896 гг., затем в 1909 г. и окончательно в годы первой мировой войны, когда младотурки почти поголовно истребили армянское население Османской империи.

На основе западноевропейских, турецких и армянских источников доказано, что в истреблении армянского населения вся ответственность падает на правящие круги Турции и на империалистические державы, главным образом, на немецких империалистов, которые своими экспансионистскими, захватническими планами способствовали осуществлению планов геноцида армян.

При поддержке империалистических держав турецкие захватчики путем истребления армян хотели «решить» армянский вопрос.

Октябрьская революция и установление Советской власти в Армении спасли наш народ, создали возможность его возрождения.